

6.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА
-----------	--

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի. Ե. ԽԼԴԱԹՅԱՆ
Ս. Գ. ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

Մինչև XX դարի վերջերը տեղի ունեցած ավանդական ճգնաժամերն ունեին կանխատեսվող պարբերականություն և փուլեր, որոնց հիմքում ընկած էին նույնպես ավանդական պատճառներ, ճգնաժամերի հաղթահարման և տնտեսական առողջացման հասկանալի և քննություն բռնած մեխանիզմներ:

Տնտեսական ճգնաժամերի առաջացման պատճառների բացահայտման ընդհանուր օրինաչափություններն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված, ինչի մասին դեռևս դար ու կես առաջ գրել է Կ. Մարքսը. «Քաղաքատնտեսության մեջ, ըստ սկզբունքի, չի կարելի անընդհատ օրենքներ բացահայտել միայն մեկ տարվա տվյալների հիման վրա: Անհրաժեշտ է հիմք վերցնել 6-7 տարվա միջին տվյալները, այսինքն, մի ժամանակահատված, որի ընթացքում արդյունաբերությունն անցնում է տարբեր փուլերով՝ ծաղկում, գերարտադրություն, լճացում, ճգնաժամ և այդպիսով իրականացնելով իր անխուսափելի ցիկլը»:¹

Կ. Մարքսի այս դիտողության հիման վրա կարելի է հետևություն անել, որ 2008թ. ճգնաժամը հանդիսանում է դասական տնտեսական ճգնաժամ, որն առաջացել է ու տեղի է ունենում կապիտալիստական արտադրության ներքին տնտեսական օրենքներին համապատասխան: ԱՄՆ-ում դրան նախորդած տնտեսական ճգնաժամ դիտարկվել է 2001թ., այսինքն՝ 7 տարի առաջ: Կարելի է առարկել, որ 2001թ. ճգնաժամը սկսվել է Կ. Մարքսի կողմից առաջարկած պարբերականացմանը ոչ համապատասխան, քանի որ դրան նախորդող արդյունաբերական ցիկլը տևեց գրեթե 12 տարի: Իրոք, XX դարի վերջին ցիկլը սկսվեց 1989թ., և քվում է, թե դա ժխտում է արդյունաբերության ընդհանուր շարժի օրենքը: Բայց պետք է նկատի ունենանք, որ ցիկլի նման երկար տևողության (1989-2001) պատճառը հիմնականում ԽՍՀՄ-ի և ամբողջ ՏՓ բլոկի փլուզումն էր, ինչի մասին, իհարկե, Կ. Մարքսը իմանալ չէր կարող: Այդուհանդերձ նշված ճգնաժամը թույլ տվեց զարգացած կապիտալիստական երկրներին իրենց ունեցած ապ-

¹ Маркс К., Энгельс Ф. Соч. 2 изд-е , т. 26, стр. 410.

րանքային պաշարները շարժել դեպի Արևելք և դրանով մասնակի չափով թուլացնել իրացման հիմնախնդրի լարվածությունը: Բացի այդ պատճառից, կարելի է նշել նաև, որ մինչև 1989թ. տեղի էին ունեցել ևս երկու լիարժեք արդյունաբերական ցիկլեր՝ 1973-1980թթ. և 1982-1989թթ., ուրեմն կարելի է ենթադրել, որ արդյունաբերական ցիկլերի տևողության մարքսյան կանխատեսումը չի կորցրել իր արդիականությունը: Ինչ վերաբերում է արդյունաբերական ցիկլերի հաճախականության արագացմանը, ապա դա էլ կարելի է հիմնավորել անցած հարյուրամյակում հիմնական կապիտալի պտույտի արագացմամբ:

Ամեն անգամ, երբ աշխարհում տեղի էին ունենում ընդհանուր բովանդակության երևույթներ, ինչպիսիք են նաև տնտեսական ճգնաժամերը, ապա դրանց առաջացման պատճառների ու հետևանքների հետազոտության ժամանակ անդրադարձ էր կատարվում միայն տնտեսական ու քաղաքական գործոններին: Կարծում ենք, որ XX դարի զարգացած կապիտալիստական երկրների տնտեսական կյանքը, ձևավորված տնտեսական վարքագիծը թույլ են տալիս ենթադրել, որ կան նաև հոգևոր բնույթի պատճառներ: Այդ իմաստով XXI դարասկզբին սկսված համաշխարհային ճգնաժամը, որն անմիջապես անվանեցին ֆինանսական, կարծում ենք, որ ունի մի շատ կարևոր առանձնահատկություն՝ այն իր ակունքներում, բացի վերը նշված պատճառներից, ունի նաև քաղաքակրթական բովանդակության պատճառ:

Ներկա ճգնաժամը, որն սկսվեց 2008թ. վերջերից, կարծես այնքան էլ չի համապատասխանում ճգնաժամերի մասին նախկին պատկերացումներին, քանի որ կան շատ ցայտուն առանձնահատկություններ: Եթե դրան անվանում են «ֆինանսական», ապա դա վերաբերում է ճգնաժամի արտաքին դրսևորումներին, կամ, ինչպես ասում են, միջավայրին: Մինչդեռ ներկա ճգնաժամի ֆինանսական թաղանթի տակ կարելի է նկատել առավել խորը թաքնված գործընթացներ, որոնք իրենց բնույթով չունեն զուտ կամ մաքուր տնտեսական բովանդակություն: Այդ հանգամանքը նշել է նաև Յ. Շումպետերը. «Լրիվ հնարավոր է, որ ճգնաժամերի իրական պատճառները գտնվեն զուտ տնտեսական գործոնների գործողության ոլորտներից դուրս»:² Ընդունելով այս տեսությունը, կարծում ենք, որ նոր ճգնաժամի առաջացման գործում էական դեր կատարել են նաև շուկայի հիմնական տարրերը, մասնավորապես՝ մրցակցությունը:

Ինչ վերաբերում է շուկայի տարրերից մրցակցությանը, ապա դրա դերի քննարկումը թույլ է տալիս նկատել, որ այն դրսևորել է ոչ սովորական բովանդակություն, այսինքն, դա ավելի շատ ոչ թե առանձին գործարարների կամ երկրների տնտեսական մրցակցություն է եղել, այլ դրանում նկատվում են տարբեր երկրների, դրանց ժողովուրդների հասարակական-տնտեսական կյանքի քաղաքակրթական համակարգերի որոշ տարրերի հակամարտության և մրցակցության դրսևորումներ:

Ժամանակակից ճգնաժամը ամենից առաջ ընդգրկել է վերջին տասնամյակներում տնտեսական ու քաղաքական առումներով առաջատար համարվող արևմտյան երկրներին, որոնք սկսել էին կորցնել իրենց ուժեղ դիրքերը, բայց շարունակում էին մնալ հզոր ու հարուստ: Դրանց շարքում առանձնանում է ԱՄՆ-ը,

² Шумпетер Й. Теория экономического развития, М., 1982, стр. 392.

որը աշխատում է արգելակել, դանդաղեցնել իր տնտեսական անկման տեմպերը՝ կիրառելով նուրբ ու ճկուն քայլեր իր առաջատարությունը պահպանելու նպատակով: Սակայն մյուս երկրների համար դա գաղտնիք չէ, և ԱՄՆ-ի ու մյուս առաջատար երկրների նման փորձերը դրսևորվում են ներկա ֆինանսական ճգնաժամի ընթացքում զարգացած երկրների ընդլայնված շրջանակով կազմակերպվող հանդիպումներում քննարկվող հարցերի բովանդակություններից: Սա էլ կարելի է դիտել որպես ժամանակակից ճգնաժամի ոչ սովորական կամ ոչ ավանդական բնույթի ապացույց, քանի որ նախկինում տեղի չեն ունեցել տարբեր մակարդակների նման հավաքներ:

Այսպիսով, կարծում ենք, որ կարելի է քննարկել նաև ներկա ճգնաժամի առաջացման ոչ տնտեսական մի պատճառ, որն ունի քաղաքական բովանդակություն: Մարդկային հասարակության քաղաքական բովանդակության ընթացքում աշխարհի տարբեր մասերում, օրինակ, Արևելքի երկրներում, ձևավորվել են հասարակական մտքի ուղղություններ, ինչպիսիք են կոնֆուցիականությունը, դաոսիզմը և բուտիզմը, որոնց տեսական քննարկումներում պարունակվում են այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են երկրի հեղինակության բարձացումը, անհատ մարդկանց ձեռքում չափազանց մեծ հարստության կուտակման, ճոխության ու շռայլումների, թալանչիական պատերազմների, մասնավոր սեփականությունը պաշտամունքի առարկա՝ կուռք դարձնելու վարքագծի դատապարտումը և այլն:

Արևմտյան եվրոպայի երկրների զարգացման պատմությունը սերտորեն կապված է XVI դարում հզոր ռեֆորմիստական շարժման արդյունքների հետ, երբ ձևավորվեցին հասարակական այնպիսի արժեքներ, ինչպիսիք էին՝ աշխատանքը, անհատականությունը, անհատի ազատությունը, ինքնակատարելագործումը, արդյունավետության և հաջողության ձգտումը, անձնական ջանքերով հարստության ստեղծումը, կենցաղային համեստ կյանք վարելը և այլն, որոնք դավանում էր բողոքական կրոնական ուսմունքը:

XX դարի II կեսից սկսած Արևելքի երկրներում, մասնավորապես Չինաստանում, քաղաքական արժեքների վերածնունդը տվեց այնպիսի դրական արդյունքներ տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, որ սկսեցին խոսել «հրաշքների» մասին:

Իսկ այդ նույն ժամականահատվածում Արևմտյան զարգացած երկրներում, բողոքական դավանանքի վերը նշված արժեքները սկսեցին աստիճանաբար անկում ապրել, քանի որ կյանքի նպատակ համարվում էր շատ սպառելը (սպառողական հասարակություն), ինչը, որպես կանոն, ձեռք էր բերվում պարտքեր կատարելով, այսինքն՝ սպառման և հնարավորությունների միջև առաջացել էր անհամապատասխանություն:

Երբեմնի հարգված կենցաղային համեստությունը, աշխատանքային էթիկան (բարոյականությունը), որոնք բողոքական դավանանքի խստակյաց վարքի հատկանիշներ էին, մոռացության տրվեցին: Արևմտյան զարգացած երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, ընդօրինակության հանգամանքը առաջացրեց մասսայական սպառողական ձգտում, որով «վարակվեց» ժողովուրդը: Համեստ կենցաղը, ապրելակերպը համարվում էին անհաջողության դրսևորում: ԱՄՆ-ի բնակչությունը, կազմելով աշխարհի բնակչության մոտ 5%-ը, վերջին տարիներին սպառում

էր արտադրված համաշխարհային ռեսուրսների 30-40%-ը, ընտանիքների 40%-ից ավելին ծախսում էր ավելի շատ, քան վաստակում էր, յուրաքանչյուր քաղաքացի իր 1 դոլար աշխատավարձի դիմաց ծախսում էր 1,2 դոլար:³

Ժամանակակից ճգնաժամի էության գնահատման ժամանակ մասնագետներն ավել մեծ ուշադրություն դարձնում են ոչ թե պարտքերի հաշվին սպառողական տնտեսության մոդելի վրա, այլ դա կապում են հիմնականում հիպոթեկային գործառնությունների ծավալների ուճացման հետ: Սպառողական հասարակության մոդելի պայմաններում ճգնաժամի առաջացման սկզբնական պատճառը, իրոք, հիպոթեկային գործարքների մեծ չափերն էին, իսկ հետո դա վերածվեց լայնամասշտաբ ֆինանսական ճգնաժամի:

Ամերիկյան խոշոր բանկերի տնօրինման տակ գտնվող պարտքային պարտավորությունները վաղուց արդեն վաճառվում ու գնվում էին մաև ԱՄՆ-ի սահմաններից դուրս և դարձել էին բորսայական սպեկուլյացիայի օբյեկտներ: «Վաճառվող պարտքերը» դարձան ժամանակակից ճգնաժամի յուրահատուկ հատկանիշ: Պարտքային պարտավորությունների վաճառքը տեղի էր ունենում ապահովագրական գործակալությունների մասնակցությամբ: Ձևակերպված իրավական փաստաթղթերը ստանում էին ֆինանսական ածանցյալ գործիքների կարգավիճակ՝ դերիվատիվ, որոնք 2-3 և ավելի անգամ վերաապահովագրվելով առաջացնում էին «ծնահոսքի էֆեկտի» վտանգ, որն էլ դարձավ իրականություն՝ ժամանակակից ֆինանսական ճգնաժամի տեսքով:

Ժամանակակից ճգնաժամն ապրող երկրներում գործնական խնդիր է ճգնաժամից դուրս գալու արդյունավետ ուղիներ գտնելը: Դրանցից մեկը տնտեսական գործընթացների պետական կարգավորման ուղին է, որը թույլ է տալիս կիրառել կարգավորման ավելի գործուն մեթոդների ու ձևերի լայն հավաքածու: Դրանք կարող են լինել ինչպես տնտեսական, այնպես էլ վարչական բնույթի միջոցառումներ, որոնք պետք է ունենան սոցիալական ուղղվածություն, օրինակ, խնայողական ռեժիմներ, եկամուտների արդար բաշխման սկզբունքներ, որպեսզի կանգնեցվի եկամուտների մակարդակների աճող տարբերակվածությունը:

О ПРИЧИНАХ ВОЗНИКНОВЕНИЯ СОВРЕМЕННОГО ФИНАНСОВОГО КРИЗИСА

**И. Е. ХЛГТЯН
С. Г. АМИРХАНЯН**

Причинами экономического кризиса могут быть не только факторы экономического и политического характера. Под оболочкой современного финансового кризиса скрыто забвение о ценностях цивилизованного характера, таких как скромный быт, осуждение сделать частную собственность объектом культа и другое, что заставляло людей делать огромные долги потребительского характера, которые перестраховывались и стали объектом спекулятивных сделок. Ажиотаж потребительского поведения привел к эффекту "домино" и разразился финансовый кризис.

³ Stu` Экономист, N 2, 2009, стр. 40, 41.

ON THE REASONS FOR CURRENT FINANCIAL CRISIS

I. Y. KHLGHATYAN
S. G. AMIRKHANYAN

The reasons for economic crisis cannot be only of economic and political character. Under current financial crisis such values of civilizational character like modest lifestyle, criticism of making private property a thing of worship, etc are hidden. It made people borrow large sums of money of consuming character which were over insured and became an object of speculation transactions. The haste of consuming behavior has led to the “dominoes” effect, and another financial crisis broke out.

МИРОВОЙ ЭКОНОМИЧЕСКИЙ КРИЗИС НАЧАЛА XXI ВЕКА И ДИАГНОЗ ОСНОВНЫХ ПРИЧИН ЕГО ВОЗНИКНОВЕНИЯ

А. А. КУРАТАШВИЛИ

*Доктор экономических, философских и юридических наук,
профессор, президент Международной Академии социально-
экономических наук, действительный член Нью-Йоркской
Академии наук, академик Академии политических наук США,
профессор Телавского государственного университета имени
Якоба Гогешабили*

Реализация социально-экономических интересов народа должна быть определяющей целью истинно человеческой общественно-государственной системы, ибо государство в истинно человеческом обществе должно существовать для народа, а не народ должен существовать для государства.

Вместе с тем, реализации отмеченной цели во многом препятствуют негативные явления, имеющие место в современном мире. В данном случае имеется в виду, прежде всего, мировой экономический кризис начала XXI века, а также вытекающие из него последствия.

Притом, основные причины возникновения данного мирового экономического кризиса, по моему убеждению, ошибочно искать лишь в самой экономике, ибо экономикой управляет не сама экономика, а управляет ею политика.

Исходя из вышеотмеченного, определяющие причины возникновения мирового экономического кризиса начала XXI века необходимо искать, прежде всего, в политическом менеджменте.

Вместе с тем, для эффективного управления экономикой и всеми другими сферами общественной жизни, политический менеджмент должен основываться на соответствующие научно-теоретические идеи, способствующие указывать и освещать путь практике [1], ибо говоря сло-